Քե՛զ պէս անհրպելի գեղեցկութեամբ անեղ՝
Կային սուրբերն անհիւթ, Հայու խո՛ր աչքերով
Խորհնացին, Մաշտոց, Նարեկացի՛ն շրթեղ՝
Որոնք ձեւե՛ռդ էին՝ ազգային տարազով:

Հա՛յր իմ տարերային, տարերքի՛ն չափ զօրեղ,
Անդո՛ւնդ՝ կեանքի, մահուան ու դարերուն հոսող,
Ի՞նչ ձեռքերով, խոկով, եւ աչքերով բիւրեղ
Պեղել, ցոլացնել քեզ, ով հա՛նք դու գաղտնաքող...:

Տէ՛ր իմ, կը տառապիմ գաղտնիքներովդ անհուն,
Սակայն կասկած, հերքում, օրէնք ու փաստ անել՝
Մէկ կողմ թողած՝ կուգամ, ո՛վ Անծանօթ ներհուն,
Աստուածային քու յո՛րդ ակունքներէդ ըմպել...:

ՄԱՌԻ ԱՓՄԱՃԵԱՆ

19 Մայիս 1953, Փարիզ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Ի՛մ երկիր, դուն ծաղկեր ես նորեն,
Հայրենի արեւուն տակ արդար,
Սիւքերը բոլորդ ինծ՝ կը բերեն:

Արեւդ ա՛լ պայծառ մընայ միշտ,
Զրլիշես անցեալի Սուգը Մեծ,
Զուներնաս ա՛լ բընաւ վերք ու վիշտ:

Ի՛մ երկիր, կ՚ուզեմ որ ա՛լ հրպարտ
Ըլլաս դուն, բայց մընաս նաեւ հեզ,
Եւ ըլլաս յաւիտեան ա՛լ անպարտ:

Եւ փոխան անհաշիւ իմ սիրոյն,
Քեզ՝ համար ունեցած կարօտիս,
Կ՚ուզեմ որ զէր գիտնաս իմ անունն:

Եւ կ՚ուզեմ տակաւին որ բըրբռայ,
Իմ երգը ուստերուդ, դուստրերուդ
Սրտերուն մէջ, շրթանցն ալ վրայ:

Այսքանը երբէ՛ տաս կը տեսնես,
Զրկարծես թէ կրնամ սակարկել,
Գիտցիր որ այդ ալ չեմ ուզեր ես:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@